

Ա. ՆԱՄԱԼԵԱՆ

Պատրիկեանի նամակները: Տփլիս, 1893 թ.

Պ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆԻ

«Պատրիկեանի նամակները» գրական մի ալբոմ է, ուր ղետեղած են ութսունական թականների հալ երիտասարդութեան մի մասի պատկերները: Ո՞ր երիտասարդական սիրտ կարող է չբարախել «հալ երիտասարդ», «հալ երիտասարդութիւն» խօսքերը լսելիս, որ հասարակութիւնը չի կամենալ ծանօթանալ իր երիտասարդութեան հետ, որի վրայ աչքն ոտկի լոյսեր են դնում: Աւստի համար կարող են խորթ լինել բոլոր աչք անձնական թէ հասարակական, ազգային թէ հանրամարդկային զաղափարները, իղձերը, իղէալները, որ լուզում, ոգևորում են երիտասարդութեան թալմ միտքը, անարատ կուրծքը: Ահա աչք հարցերը, որոնք ինքն ըստ ինքեան հետաքրքրական են զարձնում Նամակեանի ալբոմը և որոնց ազդեցութեան տակ մենք գրեթէ ազահութեամբ սկսեցինք կարդալ «Պատրիկեանի նամակները»: Կարդացինք, բալց, օգէտք է խոստովանել անկեղծութեամբ, լոյսներս չարդարացան: մենք գտանք աւելի քիչ, քան սպասում էինք: Բացատրենք:

Իւրաքանչիւր գեղարւեստական գրածք իւր վրայ ուշք է դարձնում գեղարւեստական կողմով և բովանդակութիւնով: Գեղարւեստականի մէջ առաջնակարգ դեր է խաղում հեղինակի տաղանդը, իսկ բովանդակութեան մէջ արտապատում են հեղինակի մտքերը, զգացումները, դիտողութիւնները, մի խօսքով նորա աշխարհայեցողութիւնը: Նամակեանին չընդունելով իբր տաղանդ, աւելորդ ենք համարում «Պատրիկեանի նամակները»: Գեղարւեստական կողմի մասին ծանրանալով Նամակեանը մեզ վրայ առնում է, ալսպէս ասած սիրող վիպագրողի տպաւորութիւն, որը կարծես վիպական ձև է տւել գրածքին միմիայն իրան զբաղեցնող մտքերը և գիտողութիւնները աւելի լաջող պալմաններում արտապատելու համար:

Դառնանք, ուրեմն, նամակների բովանդակութեան, որ գլխաւորն է։ Ամեն մի վիպական գրածքում հեղինակի հոգեկան բնորոշ գծերը աւսպէս կամ աւնպէս արտափալում են. որքան էլ ակզ բնորոշ գծերը թուով շատ լինեն, աւնուամենայնիւ նոցա մէջ լինում է մէկը աւնքան հիմնական, աւնքան իշխող, որ նորանով արտապալւում են հեղինակի գրածքի թէ ամբողջ ոգին և թէ ալ առանձնատկութիւնները։ Ո՞րն է Նամակեանի աշխարհայեցողութեան հիմնական, իշխող գիծը։ Նամակեանը չալտնի մտքով ազատամիտ է, միայն չափաւոր, և ոչ միշտ հաստատ, ալ տատանող ու անորոշ — ահա, իմ կարծիքով, աւն բանալին, որի միջոցով հնչւո է բանալ Պատրիկեանի նամակների թէ ընդհանուր ոգին և թէ ալ աշխի ընկնող առանձնադատութիւնները։ Եւ իբրեւ, Պատրիկեանի նամակները, արծարծելով ժամանակակից ամենաթաւ հարցեր, ունենալով անվիճելի ընդհանուր լուսաւադիմական տեսդեցիւ, աւնուամենայնիւ ոչ ոքի վրա շատ թէ քիչ խոր տպաւորութիւն չեն թողնում, առանձին հետաքրքրութիւն չեն զարթեցնում. լուսաւադէմ մարդիկ նոցանով, ճիշտ է, կը մնան գոհ, բայց սառնասրտութեամբ, առանց մազաշափ ոգևորելու, առանց լուզելու. լետադէմ մարդիկ կը մնան անհոգ, բայց զարծեալ գրեթէ սառնասրտութեամբ, գուցէ քիչ տհաճութեամբ, չամենայն դէպս չեն վրդովել, չեն զարմանալ. կարծ ասած՝ առաւջադիմական ոգով, ընթերցանութեան համար օգտաւէտ, բայց շատ քիչ հոտ — համ ունեցող, — ահա Պատրիկեանի նամակների ընդհանուր տպաւորութիւնը, բովանդակութեան կողմից։

Դառնանք մանրամասնութեան։

Նամակեանի աշխարհայեցողութեան չափաւորութիւնը իր գոյութիւնը զգալ է տալիս և հեղինակի նկարագրութիւնների մէջ. բանը աւն է, որ չափաւորութեան տրամադիր բնաւորութիւնները չեն կարող խոր զգալ, խոր տանջել, սիրել։ Ալդ է պատճառը, որ հասարակ կամ ոչ շատ պատասխանատու տիպերի նկարագրութիւնները Պատրիկեանի գրչի տակից դուրս են եկել բաւական կենդանի, բնական, մինչդեռ ամենապատասխանատու անձնաւորութիւնների նկարագրութիւնները պատշաճաւոր չափով չաջող չեն։ Ստարտի ալցելուն, Օրիորդ Նուարդը կեանքի ձախող հանգամանքների տակ տանջւում, խորովւում են, մինչդեռ նոցա հոգեկան տանջանքները, սրտի խոր հառաչանքները, կսկիծները, բուռն լուզմունքները արտապալած են մի աւնպիսի պաշտօնական, չզգացւած լեզուի, սառն ու անոգի ոճով, որ հերոսների հոգեկան դրաման, առնաւադն կիսով չափ, մնում է ընթերցողի համար անմատչելի։ Ուսուցիչ Նարոտեանը ֆանատիկոսութեան հասցրած չափով սիրում է ուսուցչութիւնը, որից բարձր և վեհ ոչ մի պաշտօն չի գտնում. մինչդեռ ալդ Պետաւլոցցիի ոգևորութիւններից փչում է բաւականաչափ ցրտութիւն, արեւտականութիւն։ Մեր ասածները հասկանալու համար, ի հարկէ,

պէտք է կարդալ լիշատակած երեք նամակները, իսկ առ ալժմ կը բերեմ մի փոքրիկ նմուշ, Պատրիկեանի ոգևորութեան խորութիւնը և ուժը պարզելու համար:

«Օրիորդը իսկապէս հրաշալի էր նւագում. մեծ տաղանդով, մեծ զգացմունքով, մեծ հասկացողութիւնով: Եւ հիացած էի, ուստի սրտաբուլիս ասացի:

—Շատ և շատ շնորհակալ եմ, օրիորդ, դուք իսկապէս վարպետ էք և ինքնուրոյն՝ երաժշտութեան մէջ: Ձեզ գովել անդամ աւելորդ է. դուք անշալտի գիտակցաբար էք ածում, որ դուք ինքներդ գիտէք ձեր գնահատութիւնը»:

Դա «հիացման» լեզուն է և ոչ «սրտաբուլիս» խօսքեր, ալլ չըզգացած ակադեմիական գովասանութիւն. ինչ էին պատմում դաշնամուրի կախարդիչ հնչիւնները, — օրիորդ Նուարդի տանջած սրտի խոր հառաչանքները, թէ նրա լուսուէր երջանիկ ընկալեցին. Նամակները ալլ զգալու և տրտալատելու փոխարէն, շուրջում է մեռելալին ցրտութիւն փչող գովասանքներ, իր շինծու ոգևորութիւնը վերջացնելով ալպիսի խօսքերով. «ձեզ գովել անգամ աւելորդ է. դուք ինքներդ գիտէք ձեր գնահատութիւնը»: Դրան ասում են հարցից փախուստ տալ, քողարկելով ընդհանուր խօսքերի տակ, Ալժմ, ընդհակառակն, վերցրէք «Արանեանի մօտ» վերնագրով նամակը, որի բոլոր հերոսները անգաղափար, բալց բարի, միջին մարդիկ են, տրամադիր անդորր, ներդաշնակ կեանքի, հեռու հոգու փոթորիկներից, ալեկոծութիւններից... Տեսէք ինչպիսի անկեղծութեամբ, աշխուժութեամբ, կախառութեամբ, բուռն համակրութեամբ է նկարագրում պ. Նամակները ալլ մարդկանց, մանաւանդ Արանեանի և նրա ներդաշնակ Աննալի դարձախօսութիւնները, նիստ ու կացը... Եւ ալպէս պ. Նամակների վրձինը, շատ թէ քիչ գաղափարական (идеи́ные) մարդիկ նկարելիս, ուժասպառ է լինում, գոնատու է. և ընդհակառակն լաշողութեամբ արտալատում է հասարակ ընտանրութիւնների հետ գործ ունենալիս:

Տեղ տեղ Պատրիկեանը, կամենալով լինել աւելի խոհեմ, իր առանց պնէլ չափաւոր ազատամտութիւնը իջեցնում է ալն աստիճանի, որ ստացւում է քողարկւած կամ ոսկեղծւած փտադիմութիւն: Ալպէս մեր հեղինակը ամենալն լրջութեամբ վիճում, ապացուցանում է, որ Ռ գիւղի մի ինչ որ վախառուի քաջագործութիւնը փնասակար է լրագրում հրատարակել և առաջարկում է կամաց-կամաց խախտող դարձնել վախառուի դիրքը, մինչև որ մի գեղեցիկ օր, քնւած գիւղական մեծամասնութեան վրա, կարելի կը լինի կործանել նրան: Ալլ ամենը որքան ժամանակում և ինչպիսի միջոցներով պէտք է ձեռք բերել — պ. Նամակները խոհեմ մարդկանց կատու զգուշութեամբ քողարկւած է պահում. բալց, ինձ թւում է, որ

մեր հեղինակը՝ «խոհմովութիւն» ասած բանը՝ ի չարն է գործ դնում, իթէ մարդկութիւնը դարերի ընթացքում գործած լինէր համանման խոհմովութիւններով, մենք այսօր, անշուշտ, շատ Զինատաճներ կունենալինք:

Չափաւոր, խոհմ մարդիկ մեծ պահանջներ չեն անում կեանքից. քիչն էլ նոցա բաւականութիւն է տալիս. դուրս մի պերճախօս օրինակը այս րոպէին լինեցինք: Դորարով եմ ես բացատրում և այն համագամանքը, որ Պատրիկեանը երիտասարդութեան ներկայացուցիչներ է ընդունել և գրեթէ գրքի ամբողջ կէսը—12 համակներէից 5-ը—հարկել մի շարք ալնպիսի անհետաքրքրական անձնաւորութիւնների, որոնք ժամանակակից երիտասարդութեան հետ շատ քիչ առնչութիւնունին: Ահա ալդ հինգ համակները՝ «Փակածը», «Սերգոյեանը», «Խաղիրեանը», «Ապագա աղան», «Արանեանի մօտ»: Փակածը—Աղաջանեանը—մի ապուշ է, տարին 12 ամիս զբաղած խաղաձև, բրդաձև և ալ ձևերի ամենաանհեթեթ բանաստեղծութիւններ մրտենլով. զբաղւում է մեր հերոսը և բառերի ծննդաբանութեամբ, որ կապւում է հետեւաւում:

խ=խառնուրդ.

խ-կ-ք. . . խառնուրդից ելք)

խ-աւ-ար. . . խառնուրդով անող.

զ=ջերմութիւն,

զ-ար ուն. . . ջերմութիւն անող ժամանակ.

և ալլն:

Ալդ զարհուրեցի անհեթեթութիւններից ոչինչ չեմ հասկանում. անշուշտ ոչ ով էլ ոչինչ չի հասկանալ. մնում է միայն զարմանալ, որ հեղինակը Աղաջանեանի նման ապուշին հնազիտական գիւտ չէ ընդունել, ալ երիտասարդութեան ներկայացուցիչ, մտնելով նրա հետ երկար ու ձիգ խօսակցութեան մէջ, հանելով ընթերցողին համբերութիւնից:

Եւ գիտէք ինչ միտք է կամեցել պ. Նամալեանը չալտնել ալդ անհեթեթ տիպով? Ահն որ մեր մէջ կան մարդիկ, որոնք իրանց հեղինակներ են համարում, բազմ որոնց գրածքները չեն արժանանում տպագրութեան: Միթէ ալդ հասարակ միտքը չալտնելու համար պէտք էր դիմել Աղաջանեանի պէս ապուշին: Վերջինիս նկարագրելիս պ. Նամալեանին հարկաւոր էր լինել Պուշկինի խօսքերը՝

Съ кого они портреты пишутъ

Гдѣ разговоры эти слышуть.

А если и случалось имъ,

То мы ихъ слушать не хотимъ.

Սերգոյեանը և Խաղիրեանը ժամանակակից մի քան մտքեր, տեղի և անտեղի գործածող թութակներ են. հալկական Ռեպետիլովներ, մինչդեռ մեր հեղինակը Խաղիրեանին, Սերգոյեանի ալդ Վարդապետ եղ.

բօրը անւանում է «ազնիւ, անշահասէր և անձնէր»։ Ազգքան էլ բարուական գնահատութեան ածանութիւն է,— ակամալ լիշում ևս պղտեցիներին։ Սերգոյեանը և Խաղիրեանը, ինչպէս ասացինք, աշխարհ իրար նման են, որ հեղինակը իւր ալըրոմում զետեղելով մէկի պատկերը, միայնը պէտք է միանգամայն աւելորդ համարէր։ Նիթէ մի րոպէ ընդունենք անգամ, որ Սերգոյեանը և Խաղիրեանը արժանի են առանձին-առանձին նամակներով, դարձեալ կը տեսնենք, որ ալդ նամակներում կարելի է անել 'առաջին կրճատումներ, առանց բովանդակութեանը մազաչափ փետտելու։ Վերջնէնք թէկուզ Սերգոյեանին, որին նւիրած է ամբողջ տասն և վեց էջ, մինչդեռ առաջին երեք էջերում միանգամայն պարզել է Սերգոյեանի բնաւորութիւնը. մնացած ամբողջ 13 էջերը ոչինչ չոր բան Սերգոյեանին բնորոշելու համար չեն ասում և աւելորդ են։

Պատրիկեանը նւիրելով մի որ և է Սերգոյեանին նոյնքան թերթեր, որքան օրինակ մի օրիորդ Նուարդին, բնականաբար առաջին նամակը դարձնում է անբովանդակ, ձանձրալի, անհետաքրքիր, մի պակասութիւն, որով խիստ կաղում են վերոյիշեալ հինգ նամակները, մանաւանդ ապրիլն լիշած երեքը։ «Արանեանի մօտ» նամակը, լինելով կենդանի ճկարագրութիւններով լիքը, աշուղտմանաւելու բովանդակութեան կողմից անհետաքրքրելի է. դորա գլխաւոր հերոսը Արանեանն է, կաշառք չլիցնող մի անտառապետ, մեր Պատրիկեանի սիրելի բարեկամը, իբրև անհատ ազնւասիրտ, իսկ հասարակական տեսակէտից զրօ, Հեղինակը դէպի նա վերաբերում է մի աշխարհի սրտաշարժ մտեղութեամբ, մի աշխարհի անկեղծ համակրութեամբ, որ կարելի է բացաղբել միայն և միայն Պատրիկեանի, որ նոյնն է պ. Նամակեանի, հասարակական մասշտաբի փոքրութեամբ, Խնշով է Արանեանը ազգքան հիացրել մեր հեղինակին ? Նրանով որ բարձրագոյն ուսում ստացած ալդ անտառապետը աշխատում է հիմնել մի ինչ որ դրադարան, մի գործ որ մեղանում ոչ սակաւ գլուխ են բերում շատ սովորական մարդիկ—Վերջապէս Ապագալ աղան համոզմունքների առուտուր անող մի քամելէն է. միայն իր ներքին դատարկութիւնը կարողանում է քողարկել անթափանցիկ աչքերից նորանով, որ դիտէ իրան լուրջ դիրք տալ, պահելով մշտական լռութիւն և տեղ տեղ պատգամներ արձակելով ազատամտական կամ ցետաղիմական ոգով, նալած հանգամանքներին։ «Ապագալ աղան» հետաքրքրական կը լինէր, եթէ թիւած, գունատ չլինէր գուրս բերած։

Ն. աղպէս պ. Նամակեանը, շնորհիւ իր աշխարհացողութեան ճեղ մասշտաբի, կեանքից մեծ պահանջներ չունի, բաւականանում է խոհեմաբար քնով. կարճ ասած, երեւթները, անձնաւորութիւնները գնահատելիս, նա ընդունում է փոքր մասշտաբ. Շնորհիւ մասշտաբի փոքրութեան, մարդիկ Նամակեանի աչքում բնականաբար մեծ են երևում և ար-

ժամանում անելի մեծ ուշադրութեան, քան նոքա արժանի են, քան նոքա իրաւունք ունին Ազգայն խաղիրեանը դառնում է «ազնիւ, անշահասէր, անձնէր», մինչդեռ, Բարսեղեանի ասելով՝ խաղիրեանը լուրեր տանել բերելով զբաղող մի ողորմելի արարած է: Հասարակական տեսակէտից զոր Արանեանը արժանանում է խորին համակրութեան, բռն անկեղծութեան, մտերմութեան. այդ խիստ պատճառով անհետաքրքրական մարդիկ—Փակաժը, Սերգուեանը, խաղիրեանը, Արանեանը, Ապագայ աղան, որոնք շատ քիչ տոնջութիւն ունին երիտասարդութեան հետ, գրաւում են գրքի ամբողջ կէտը, երկար ու ձիգ նկարագրութիւնների նկիթ դառնալով:

Դառնանք Պատրիկեանի այն հերոսներին, որոնք երիտասարդութեան անելի հետաքրքրական ներկայացուցիչներն են: Ազդեղ հեղինակը թու է տւել իրան մի ալ սխալ, կենտրոնանալով հերոսների հանրածանօթ, ոչինչ նորութիւն չներկայացնող գծերի, գաղափարների վրայ: Կարդացէք «Մտավախը ու կեանքի սիւները» և «Ուխտաւորները» վերնագրով նամակները, ուր դուրս են բերւած մեր երկու մեծ կուսակցութիւնները—մշակականների և մեղականները—ընդհարումները, և դուք կը համոզւէք, որ այդ նամակներում արծարծւած մտքերը այնքան մաշւած, հնացած, ընդհանրացած են, որ կարծես լրագրներից արտադրած լինեն: Գէորգեանը մշակական է, և թէև իբրեւ տիպ կենդանի է, բայց այդքան քիչ է խօսում, որ մնացել է տուերի տակ և հետեալաբ «մշակակա՜նութեան» վերաբերեալ ոչինչ գաղափար չէ տալիս: Մեսրոպեանը մեղական է, կենդանութիւն չունի, անելի թխած է, քան ընտկան և կարկուտի նման իրար վրա անտեղի մի առ մի շարում է բոլոր այն հնացած, մաշւած, ընդհանրացած մտքերը, որ ամեն օր կը գտնես մեր լեռագէտ՝ կուսակցութեան լրագրներում «Ուխտաւորների» հերոսներն էլ նոյն մեղակականներն են, որոնք մի գլուխ պահանջում են երիտասարդութիւնից զրազել «աղգազրական» խնդիրներով, ծանօթանալ հնութեան, պատմութեան հետ: Այդ ամենի մէջ էլ չկայ մի գիծ, որ նորութիւն կազմէր ընթերցողի համար և լրագրներից անելի լաւ լաւտնի չլինէր: Վերադարձը սակայն, իւր պատկերների մէջ պարտաւոր է ներկայացնել հերոսների այնպիսի ընդունող գծեր, առանձնապատկութիւններ, որ հարստացնեն ընթերցողի անձնական դիտողութիւնների պաշարը, հոգեբանական որ և է նորութիւն կազմելով նորա համար—մի հանգամանք, որ պակասում է վերոյիշեալ երկու նամակներում:

Դանք «Պատրիկեանի նամակները» վերջին էական պակասութեան. այ. նամակեանը խոս է տալիս մէծական կարծիքներից. նա դժարանում է անպալման կամ համակրել կամ հակակրել որ և է գաղափարին: Պատրիկեանի նամակներում ազատամտութեան զանազան ճիւղաւորութիւնները, ֆրակցիաները ունին իրանց հերկայացուցիչները, որոն-

ցից իւրաքանչիւրը ունի իր հաւատամբը: Պատրիկեանը ալդ ֆրակցիաներից ոչ մէկին էլ չէ կամենում պատկանել: Նա բոլորին էլ և համակրում է և հակակրում, գտնելով բոլորի մէջ էլ և ճշմարտութիւն և անարդարութիւն: Վիճում են, դիցուք, հակառակ ֆրակցիաների երկու ազատամիտներ—Մուշեղեան և բժիշկ Բարսեղեան: մեր հեղինակը կարելի է համարում երկուսի հետ էլ և համաձայնել և չհամաձայնել, ասելով՝ «պ. Մուշեղեան, դուք կատարեալ իրաւունք ունէք պնդել ձեր ասածների վրա, բայց բժիշկի ասածների մէջ էլ կան իսկապէս էական կէտեր» Վիճում են ալ երկու ներկայացուցիչներ—Ալափեան և Հաթամեան—մեր հեղինակը դարձեալ համաձայնում է և մէկի և միւսի հետ: Կարճ ասած, ազատամտութեան բոլոր ֆրակցիաների դէմ պ. Նամալեանը ունի իր «թեր և դէմ» կարծիքները, մի երեսից, որ իմ կարծիքով, առաջ է գալիս հեղինակի աշխարհայեցողութեան անորոշութիւնից: Սև իրաւ, կան մարդիկ, որոնք անւանում են իրանց և ազատամիտ և պահպանողական, կամենալով դորանով ցոյց տալ, որ նոքա երկու կուսակցութիւնների մէջ էլ գտնում են ճշմարտութիւններ: Կղպլիսի խելօքներին մինք անւանում ենք անորոշ համոզմունքների տէր մարդիկ և ամենապէս իրաւամբ Բանը աչն է, որ դժւար է երեակալել մի կուսակցութիւն, մի շօլա, որ չպարունակէր իր մէջ շատ թէ քիչ չափով ճշմարտութիւն, շատ թէ քիչ թւով լաւ կողմեր: հարցը միայն նրանումն է, թէ ո՞ր կուսակցութիւնը աւելի մեծ ճշմարտութիւն, աւելի շատ քանակութեամբ լաւ կողմեր ունի: Դորա համեմատ անհատը գրում է ալս կամ աչն կուսակցութեան համախոհ, թէ և դիտէ, որ հակառակ կուսակցութիւնն էլ կարող է զուրկ չլինել օգտաւէտ կողմերից: Նոյնը պէտք է անէր Պատրիկեանը նաև ազատամտութեան տարրեր ֆրակցիաների վերաբերեալ: մինչդեռ մեր հեղինակը չչեղելով ընդհանրապէս ազատամտութեան սահմաններից, իրան ազատ է պահում ամեն տեսակ ազատամտական ուղղութիւնների հետ կոմպրոմիսների մէջ մտնելու, բոլոր ֆրակցիաների հասցէով էլ կոմպրոմիսնտ շուալելու, թափառական մարդկանց պէս ուր ոտն դնելով: «Թեր և դէմ» կարծիքները աչնքան դերել, կաշկանդել են Պատրիկեանին, որ վերջինս, նոյն իսկ հասարակ հարցերում անընդհատ դիմում է իր սիրած, փափալած թեր և դէմ կարծիքներին: Մանուկեանը դատաւիտելով ժամանակակից ուսանողութիւնը, մեր հեղինակին հարցեր է առաջարկում նորա կարծիքը իմանալու նպատակով: Պատրիկեանը անխռով պատասխանում է. «խնդրեմ առանց ինձ հարցեր առաջարկելու շարունակէք ձեր ասելիքը: ես իմ կարծիքը ունիմ ուսանողութեան վրա—թեր և դէմ»: Բայց պ. Նամ լեանը չի աշխատում պարզել իր դրական կամ բացասական դիրքը դէպի ուսանողութիւնը, և ոչ էլ ընթերցողը կարողանում է հասկանալ թէ ինչ թեր և դէմ ասելիք ունի պ. Նամալեանը ուսանողութեան մասին....

Անվտանգութիւնը որ և է դրական կարծիք չափանելու կամ վերջին-
նիս բացակայութիւնը պ. Նամալեանին մղում է դէպի «միջին» ճանա-
պարհները և հարցերից փախուստ տալը:

Օրիորդ Նաւարդը հարցնում է.

—Հաւանում է՞ք պիէսը:

—Միջակ է, պատասխանում է պ. Նամալեանը, որի կարծիքով «մի-
ջակ» է կազմած և օրիորդ Նաւարդի թարգմանութեան համար նշանակած
դրժերի ցուցակը. «միջակ» ընդունակութեան տէր է և հոգաբարձու Սերո-
բեանը. «միջակ» է առաջ գնում և հակական կեանքը...

Շնորհիւ Նամալեանի աշխարհայեցողութեան անվճռականութեան,
անորոշութեան, ամեն բանում միմիայն թեր և դէմ կարծիքներ պահե-
լուն, շատ հարցեր, երևութներ, հպեացակէտեր, ամբողջ տիպեր մնացել են
անորոշ, չլուսաբանւած, պարզ չձևակերպւած, թողնելով ընթերցողին տա-
րակուսանքի մէջ: Այդ պակասութիւնը ավնքան զգալի է, որ օրինակ-
ներ շատ կարելի է բերել, բայց շատանանք մի քանիսով: Վերջինք
«Ներտասարդ Հաթամեանը» վերնագրով նամակը: Այդտեղ Ալափեանը
կարդում է մի լողած—Մի ազգի առաջադիմութեան պայմանները—խո-
րադրով: Հաթամեանը հակաճառում է Ալափեանին, բայց վերջինս պա-
հում է: զաքարէական լռութիւն: Ինչո՞ւ Ալափեանը լռում է: չի խօսում:
միթէ լողած կարդացողը չէր կարող իր մտքերը պաշտպանել սխալ
կամ ուղիղ. մինչդեռ Ալափեանի լռութեան պատճառով նորա տեսա-
կէտը առաջադիմութեան վրայ մնում է միանգամայն մութ: Այդ հակա-
ցակէտը վերցնում է պարզելու ինքը Պատրիկեանը, բայց նրա խօսքերից—
թէ կեանքին և տալիք ունենք և ստանալիք—ընթերցողը ոչինչ չի հաս-
կանում: Հաթամեանը, իբրև տիպ շատ անորոշ, շատ գունատ է: իսկ նրա
տեսակէտը առաջադիմութեան վրայ լաւ չլուսաբանւած, կարճ ասած,
Հաթամեանի և Ալափեան—Պատրիկեանի վիճաբանութիւններից ընթեր-
ցողը ոչինչ պարզել չի կարողանում: —Վերցնենք «Իմ ուղեկիցներ» վերնա-
գրով նամակը. աղետեղ Մուշեղեան և Բարսեղեան վիճում են Նոյնպէս չա-
ռաջադիմութեան պայմանների մասին. առաջինի կարծիքով չառաջադի-
մութիւնը պայմանաւորւում է ժողովրդի նիւթական ապահովութեամբ,
իսկ երկրորդի կարծիքով—ժողովրդի բարոյական սկզբունքների բարձ-
րութեամբ: Անշուշտ ալդ երկու կարծիքներից մէկը աւելի տարածւած
կը լինի երիտասարդութեան շրջանում, իրականութեան մէջ, քան միւսը.
անշուշտ ալդ երկու տեսակէտներից մէկը աւելի մեծ ճշմարտութիւն
է պարունակում իր մէջ, քան միւսը: Պատրիկեանը Մուշեղեանի և
Բարսեղեանի վիճաբանութիւններին մի աշնայիսի ձև, ուղղութիւն պէտք
է տար, որ ընթերցողի համար պարզէին մեր շնչած երկու կէ-
տերը. մինչդեռ նա ստիպելով Մուշեղեանին և Բարսեղեանին իւրաքան-

չլուրին լոկ իր ասածները հաստատել, առանց ջրելու հակառակորդին, թողնում է ընթերցողին անորոշութեան, տարակուսանքի մէջ, թէ որ հակառակորդի տեսակէտը արդարագոյն է, թէ կամ գոնէ որի տեսակէտը անլի խոր արմատներ ունի իրականութեան թէ կողմ միայն երկտասարդութեան մէջ:

Վերջենք վերջապէս երրորդ օրինակը—«Ոտարօտի ացեղուն»։ Ալդտեղ Մանուկեանը այնքան դժգոհ է ժամանակակից ուսանողներից, որ ընկնելով ծալրակեղութեան մէջ հերքում է նոյն իսկ համալսարանների անհրաժեշտութիւնը, թէև համալսարանական կուրսը ձեռք է բերում տանը երեք տարւալ տոկոսն աշխատութեամբ: Մանուկեանի անբաւականութեան պատճառները, մօտիւնները մի քանի են, և ըստ երևութին ամենագլխաւորը ժամանակակից ուսանողների բարոյական սնանկութիւնը, որ թող չէ տալիս նոցա ձգտել հասարակական գործունէութեանը: Մինչդեռ Պատրիկեանի գրչի տակ մեր հերոսի անբաւականութեան մօտիւնները այնքան խառնվինդոր են, անարատ հոգու գաղափարական պահանջները այնքան չիտթւած են վաճառականական հաշիւների հետ, որ ընթերցողը դժարանում է որոշել Մանուկեանի անբաւականութեան գլխաւոր շարժառիթները երկրորդականներին: Եւ այդպէս, շնորհիւ Պատրիկեանի աշխարհայեցողութեան անվճռականութեան, անորոշութեան, ամեն բանում թեր և դէմ կարծիքներ պահելուն, առանց այդ սահմանից դուրս գալ կարողանալուն չատ հարցեր, երևութներ, ամբողջ հայեցակէտեր, տիպեր մնացել են մութ, անորոշ, չլուսաբանած, պարզ չձևակերպած, թողնելով ընթերցողին անորոշութեան մէջ: Պարզ է որ հեղինակը ինքը իւր ճանապարհը չի գտել. թեր ու դէմի սահմաններից դեռ չի վերացել:

Մինչև այժմ խօսելով Պատրիկեանի նամակների բովանդակութեան մասին, գտանք երեք էական պակասութիւններ հետեւել ինն նամակներում. «Փակւածը», «Երգգոյնանը», «Խաղիւրեանը», «Արանեանի մօտ», «Ապագալ աղան», «Մտաւախը ու կեանքի սիւնէրը», «Ուխտաւորները», «Երկտասարդ Հաթամեանը», «Իմ ուղեկիցները»։ Այդ նամակներից առաջին հինգը, ունենալով աննշան բովանդակութիւն, ձգձգւած երկար ու բարակ նկարագրութիւններով, պարունակում են անազին աւելորդ բոլը, ուստի ջրալի, անհետաքրքրական ու տաղտկալի են: Հետեւալ երկու նամակները, արժարժելով հանրածանօթ, ծամծամ մտքեր, նոյնպէս ջրալի, անգոյն, անհետաքրքրական են: Վերջապէս վերջին երկու նամակները—«Երկտասարդ Հաթամեան և Իմ ուղեկիցները»,—չօշափելով հետաքրքրական հարցեր, գաղափարներ, բայց պատշաճաւոր չափով լուսաբանւած չլինելով, կարող են գրաւել ընթերցողի ուշադրութիւնը, մանաւանդ առաջի նամակը. երկրորդը կիսով չափ կը գրաւէ:

Ի նկատի ունենալով ասածներս, ես վերոյիշեալ եօթը նամակներից որ և է շօշափելի օգուտ չեմ սպասում:

Այժմ դառնաճք դէպիսն նամակները, որոնք հոտ-համ են տալիս գրքերին Ահա այդ նամակները՝ Օտարօտի ալցելու, օրիորդ Նուարդ, Ուսուցիչ Նարոտեան: Այդ երեք նամակների մի ընդհանուր գեղարևոտական պակասութիւնը մենք պարզեցինք դեռ լողածի սկզբում, ցոյց տալով, որ դոցա հերոսների հոգեկան ներքին դրաման, սրտի բուռն լուզմունքները պատշաճաւոր ուժով, լեզուով չեն թարգմանւել նամակների կողմից: «Օտարօտի ալցելու» անբաւականութեան շարժառիթների խառնվեցողութեան վերաբերեալ մի փոքր ակնարկութիւն նույնպէս արել էի. այժմ աւելորդ չեմ համարում ուսուցիչ Նարոտեանի վերաբերեալ եւ մի նկատուիթիւն անել Նարոտեանը մի իղէալիստ ուսուցիչ է, հոգու քոլոր թեւերով նւիրած իր պաշտօնին. մի աղպիսի իղէալիստ կամալ ակամալ ընդհարումներ ունենալով շրջապատող հացկատակ ուսուցիչների և անտարբեր հասարակութեան հետ, այնք է որ զգացած լինէր շրջապատող խեղտող մթնոլորտի բոլոր թունաւորող ժանիքները, ճիշտ ափսոս, ինչպէս օրինակ Օտարօտի Ալցելուն, կամ օրիորդ Նուարդը. մինչդեռ Նարոտեանի անբաւականութեան, դժգոհութեան մասին շատ հարկանցի կերպով է լինատակած: Այդ պատճառով, Նարոտեանից չէ դալիս իրականութեան ափն հոտը, որ ափնքան քաղցրութեամբ փշում է Օտարօտի ալցելուից, օրիորդ Նուարդից, Այն Օտարօտի ալցելուն, օրիորդ Նուարդը իրանց ոտքերի տակ աւելի շատ իրականութեան հող ունեն, քան ուսուցիչ Նարոտեանը, թէն վերջինս իր մտաւոր-բարոյական աշխարհով ցած է առաջիններից:

Չնախելով «Օտարօտի ալցելու», «Ուսուցիչ Նարոտեան», «օրիորդ Նուարդ» վերնագրով նամակների մեր ցոյց աւածպակասութիւններին, նոքա սակափն իրանց բովանդակութեամբ ափնքան խոր են յօշափում մեր կեանքը, տալիս են մտածելու, զգալու ափնքան նիւթ, որ արժանի են առանձին-առանձին քննութեան, որ և կատարում ենք մեծ ուրախութեամբ:

Կան մարդիկ, որոնք դէն գցելով սեպհական բաղդաւորութեան վրայ այլ եւ մտածել, նւիրում են իրանց հասարակութեանը մի մեծ նպատակով՝ թեթեւացնել խեղճերի, թշուառների, տանջածների ծանր բեռը, օգնել կեանքի խորթ դաւակներին տենչալի բաղդաւորութիւնը բերելու համար: Երանի ափն հասարակութեան, որ շատ ունի այդ «օրհնեալ» անդամներից. դրանք են «երկրի աղը», դրանցով է պարմանորում ազգերի և լաւաջադիմութիւնը և բաղդաւորութիւնը: Հալ երիտասարդութիւնն էլ վերջին ժամանակներս սկսել է տալ «օրհնեալներից», որոնց ներկալացողիչներից պ. Նամակների գրքում գտնում ենք երեքին—Օտարօտի ալցելուն, օրիորդ Նուարդին, մասամբ և ուսուցիչ Նարոտեանին: Օտարօտի ալցելուն—Մանուկեանը—մարմնացած բողոք է ժամանակակից ուսանողութեան դէպի գիտութիւնը և դէպի ժողովուրդը բռնած ծուռ ընթացքի դէմ: Մենք հալերս բաւական հաստիւր աղգ ենք, և այդ հասկանալի է.

լինելով պատմութեան «խորթ» զաւակներ, կրելով դարերի ընթացքով հազար և մի տեսակ հալածանքներ, նեղութիւններ, մենք ընակահարար սովորեցինք չսիրել ուրիշներին, մտածել միայն մեր թշառ ևսի վրայ: Հալի ալդ եսամոլութիւնը զգալ է տալիս իր գոլութիւնը և հալ ուսանողութեան երակներում: Ինչքան համալսարանականներ կարելի է թել, որոնց տգիտութիւնը, երեսպակաւ դարգացումը ապշեցնում է. որքան համալսարանակ աններ կան, որոնց ամբողջ կեանքը, գոլութեան միակ նպատակը իրանց թշառ կարիերան է, այն կարիերան, որի համար ընդունակ են զոհելու ամեն սրբոյթիւն, ընդունակ են դիմելու ահապահի ստորութեաններին, ցածութիւններին, որոնցից զզւելով կփախէին նոցա անգրադէտ պապերն անգամ... Ահա այն հարցերը, որոնց պատճառով Մանուկեանը այնքան մտատանջւել, այնքան ցուել է, դիմելով անբնական ելքի—հերքելով համալսարանի անհրաժեշտութիւնը, Մանուկեանը վերջացնելով գիմնադիական կուրսը և վճռած լինելով իրան նւիրել ժողովրդին, մտադիր է, ապագայ գործունէութեան համար աւելի պատրաստած լինելու համար, գնալ համալսարան, «մտքի ալդ լաբորատորիան»: Աւարտման քննութիւնը տւած-չտւած՝ մեր հերոսը ծանօթանում է և վիճաբանութեան մտնում երկու նորեկ ուսանողների հետ ու շուտով մերկացնում մէկի մէջ անսահման տգիտութիւն, իսկ միւսում թոշնած երկտասարդութիւն, հոգեկան ծերութիւն, վրդովեցուցիչ անտարբերութիւն դէպի ժողովրդի ցաւերը, դէպի հասարակական գործունէութիւնը: Տեսնելով համալսարանի ալդ կենդանի արդիւնքները, Մանուկեանը խոր ընաւորութիւններին չատուկ ուժով նւիրւած լինելով իր «սիրելի մտածմունքներին» ոչ թէ լոկ խելքով, այլ հոգու բոլոր թելերով, մնում է ապշած, քարացած, կալծակնահար դարձած, մեքենալարար մտածելով. «Եթէ դա է հետեանքը—ալդ լոգնածութիւնը, վաղ պառաւութիւնը,—ուրեմն ինչնչու է պէտք ուսանողութիւնը, կըզնամ, ուսում կառնեմ, բալց ոչփերս կապառեմ և կըդառնամ հալքեմք. ուսում և խնդի կըլինեմ ևս պէտք, Յանկարծ միտքս եկաւ, որ մեր քաղաքում 5 իրաւագէտներ կալին, 3 բժիշկ, 2 արհեստագէտներ, դոքա բոլորն էլ բարձր ուսում են ստացած. դոցանից միայն մէկը—բժիշկ Սատարեանը—կենդանի մարդ է. հասարակալին խնդիրներ քրքրող և ընդհանուր շահերի ջատագով: Ուրեմն, ուրեմն, ուրեմն... Ես վճռեցի բարձր ուսում առնելու չգնալ»: Մանուկեանը մնում է հաւատարիմ իր վճռին, բալց իր ընկեր ուսանողից բերել տալով իրաւաբանական դասախոսութիւնները, չրջապատելով իրան ընտրած մասնագիտութեան համապատասխան գրքերով, երեք տարալ անխոնջ աշխատութեամբ անցնում է «բոլոր իրաւագիտական առարկաները նոյնքան մանրամասն», կարգում է «ընդհանուր բովանդակութեան ալնքան գրքեր», որքան ոչ մի համալսարան գնացածը նորա ընկերներից: Տանը ձեռք բերելով և

լուրջ գիտութիւն և լուրջ ընդհանուր դարգացում, Մանուկեանը մի տարի էլ նւիրում է իրան իրական կեանքի պայմանները ուսումնասիրելու, որպէս զի լեւոյ, զինւած բոլոր կարեւոր զէնքերով, նւիրէ իրան հալ ժողովրդին, նրա ցածրը, հոգսերը դարձանելու համար....

Նարոտեանը բողոք է արն հացկատակ հալ ուսուցիչներ ղէմ, որոնք իրանց պաշտօնի վրայ նախում են, իբրեւ մի ժամանակաւոր պարապմունքի վրայն ուսումնարանական տարին վերջանում է թէ չէ, իսկոյն իրանց աճուրդի են հանում և ուր մի սե կոպէկ աւելի են տալիս, աշնոնդ էլ գնում են, լինի ալք «աշնոնդը» մի խանութ, մի առևտրական գրասենեակ, մի գինետուն, մի ոտտիկանատուն, թէ էլի մի նոր հալկական դպրոց, միենողն է։ Նրբ լիւում են ալք կարգի ուսուցիչների տգիտութիւնը, ստորութիւնները, երեսօրիդները իրար ղէմ, անսահման անտարբերութիւնը, անփութութիւնը ղէպի իրանց ուսուցչական պարտականութիւնները. երբ երեսօրիւում ևս թէ ամեն մի ժամ, ամեն մի բոպէ քանի-քանի հաղարաւոր հալ մանուկների թարմ ուղեղները, անարատ սրտերը, մտաւոր-բարոյական անոնդ ստանալու փոխալէն, ալլանդակաւ են ալք անկող, անարժան ուսուցիչներ ձեռով—ակամալ բացականչում են. «խեղճ, խեղճ հալ դպրոցներ, երբ պէտք է ալցի են ձեռ Նարոտեանները»։ Նարոտեանի և մեր հացկատակ ուսուցիչների հիմնական զանազանութիւնը կապանում է նրանում, որ առաջինը իր գործին նւիրած է ոչ թէ պատահամբ, ալ կատարեալ գիտակցութեամբ, սիրում է նորան իր ամբողջ հոգով, իր ամբողջ էութեամբ. իր պաշտօնը լաջողութեամբ կատարելում գտնում է զլիսաւոր, եթէ ոչ միակ վարձատրութիւնը։ Ահա թէ ինչպէս է ալք ամենը ամփոփում ինքը Նարոտեանը. «Գոնէ ինձ համար դպրոցը, ուրտեղ ևս պարապում եմ, ընդարձակ գործունէութեան ասպարէզ է և անսպառ ոգևորութեան ասպարէզ...։ Նս կարծում եմ, որ հասարակական ամենամաքուր գործունէութիւնը մեղանում ուսուցչութիւնն է. ալստեղ իմ ամեն մի ժամը, ամեն մի օրը, իւրաքանչիւր իմ քալը տեսնում եմ նպատակին ծաւալեցրած, կըրթութեան և լուսաւորութեան համար ծախւած, Դա հաշւապահական տեսակէտից, Բալց կալ և մի ալք հանգամանք...։ զա ոգևորութեան, գործը սիրելու և նորան նւիրելու հանգամանքն է։ Նս սիրել եմ ալք գործը և սիրահարել եմ նորա վրալ։ Նս ունեմ աշնպիսի վառ և սաստիկ տպաւորութիւններ ստացած ալս գործից, որ լաւիտեան նոքա կը մնան անմոռանալի ինձ համար...։ Ով ալգպիսի իղէ ալականութեամբ է վերաբերում ուսուցչութեան, նա, անկասկած, հրաշքներ կանէ. և Նարոտեանը ալք հրաշքը գործում է. «Աշակերտները սիրահարել են նորա վրալ. Նս կատարեալ կախարդել է նոցալ, ասում է ալ. Նամալեանը, Միայն զղելի աւագ-ուսուցիչը գո՛ չէ իր թշառ հեղինակութեանը վնասող Պիտտալոցցի-ուսուցչով. բացի ալք մի ինչ որ ինտրիգ լարում է Նարոտեանի ղէմ

ասարակութեան մէջ, որ և առիթ է տալիս պ. Նամակեանին, նրա հետ և ամեն մի սրտացաւ հալի մտածել. «Կը դիմանալ Նարոտեանը արդեօք. կը տանի շրջապատող անհիւրասէր մարդկանց սառնասրտութիւնը և չի զարանս և մի օր և կտմ լուսահատիլ ու թուլանալ կամ կոչտանալ, խտտանալ և կղզիանալ»: Անտեղի չեն ալդ կասկածները. քանի-քանի րաբիխիդ՝ ուսուցիչներ, չկարողանալով տանել հացկատակ ուսուցիչների խեղդող մթնոլորդը, թողել հեռացել են...»

Պր. Նամակեանի 12 նամակներից լուրջ ուշադրութեան առնելով միայն երեքը—Օտարօտի ալցելու, Ուսուցիչ Նարոտեան, Օրիորդ Նուարդ—վերջին երեքի մէջ էլ գտանք մի ընդհանուր պակասութիւն. բացի ալդ «Օտարօտի ալցելուն» և «Ուսուցիչ Նարոտեանը» ունէին իրանց առանձին-առանձին պակասութիւնները, որոնցից աւելի ազատ է «Օրիորդ Նուարդը»: Եւ ալդպէս «Օրիորդ Նուարդը» Պատրիկեանի նամակներից լաւագոյնն է, իբր հետաքրքրական տիպ, մենք սիրով աւելի երկար կանգ կ'առնենք նորա վրայ:

Քիչ առաջ մենք խօսեցինք հասարակական ասպարիզում գործող «օրհնեալ» մարդկանց մասին. դոցա գործունէութեան սրբութիւնը, օգտակատութիւնը անվիճելի է. Կան մարդիկ, նոյն իսկ ամբողջ հասարակութիւններ և ալն էլ ամենազարգացած ազգերի մէջ, որոնք զանազան կասկածելի միջոցներով ապացուցանում են, թէ մարդկութեան ամբողջ կէտը—գեղեցիկ սեռը—իրաւունք չունի «օրհնեալ» մարդիկ տալու, թէ կիներ ստեղծւած է լոկ ընտանեկան շրջանի համար, ուստի չպէտք է համարձակի ձգտել որ և է հասարակական գործունէութեան: Այդ կարծիքի դէմ են շատերը, որոնց մէջ և գեղեցիկ սեռի լաւագոյն մասը, որ ասում է առանց խորամանկ սոփեստութիւնների դիմելով. «ես մարդ եմ և ոչինչ մարդկայինը ինձ համար խորթ չէ. ուստի եթէ տղամարդը, ինձ հետ միենոցն արիւն-մարմին ունեցողը, ձգտում է հասարակական գործունէութեան, կամենում է ընկնել «օրհնեալների» շարքը, ես ես իրաւունք և պարտականութիւն ունեմ գործել հասարակական ասպարիզում, մտնել «օրհնեալների» կարգը. թէ երկու մարտնչող կարծիքներից օրը վերջի վերջոյ պէտք է լաղթէ,—պարզ է. միայն կռիւը, լուռ, բաց անելի, անթիւ զոհեր պահանջող մեծ կռիւը համեմատապէս դեռ նոր է սկսել նոյն իսկ ամենալուսատուած երկիրներում... Այդ ահարկու կռիւ մօտ Նուարդի կռիւը նման է մեծ ովկիանոսի մի կաթիլ ջրի, գուցէ նկատեն մեզ. ձիշտ է, բայց ալնուամենայնիւ—ալդ կաթիլ ջուրը խիստ թանգ է հալկական անապատում: Երեւակալեցէք ձեզ զարգացած, խելօք, համարձակ, տոկուն, հապարակական գործունէութեանը ողջ էութեամբ ձգտող մի օրիորդ. երեւակալեցէք, որ լինալ ընդունակութիւններով օժտւած շնորհալի օրիորդի մտաւոր-բարոյական ցանկութիւնները, իղձերը, շրջապատող մարդկանց տգիտութեան անտարբերութեան

չնորհիւ, մնացել են կաշկանդւած, դոհացում, բաւարարութիւն չեն տա-
նում, ստիպելով տանջող նաւապետի նման մի կողմից մարտնչել փոխա-
ւից դու ալիքներէ դէմ, իսկ միւս կողմից ցամաք դուրս գալու համար
անընդհատ փնտռել նաւահանգիստ: Այդ ամենը երևակայելուց չնտոյ հաս-
կացած կըլինէք Նուարդին: Այսուհետեւ ես կըլստեմ հեղինակի իրա լիզ-
ւով: Նուարդը հարուստ ծնողներէ զաւակ է. բաց թէ ծնողներէ հախացք-
ները և թէ նոցա հարստութեան փալլը խորթ են նորա սրտին. «ծնող-
ներս ուրախ են, որ ես ուսում եմ առել, բաց եթէ քննէք կըտեսնէք»
որ նոցա պէտք չէ ինքը ուսումը իր հետեան քննելու. նոքա զարդարել
են իրանց սենեակները. ինչու չզարդարէին և իրանց աղջկան, տալով
նորան բացի զգեստից և ուսումնական փալլ: Պոհ չէ օր. Նուարդը և
նորանց տուն լաճախող բարեկամ-ծանօթ երիտասարդներից. «Համաճախ-
ւեցէք, որ կարելի է սովորել աչն տեսակ անձինքներին, ինչպէս Սերգո-
լեանը: Եւ նախանձում եմ, տեսնելով նորա աղանձիական միամտութիւնը,
նորա ոգևորւած և համոզւած դատարկաբանութիւնը»: Անտարբեր դէպի
իր ծնողների նիստ ու կացը, դէպի նոցա հարստութիւնը, դէպի շրջա-
պատող ողորմելի երիտասարդները, օր. Նուարդը ճաշակել է մի ալ կեան-
քի անհուն քաղցրութիւնը և չգտնելով շուրջը, փանջւում, խորովում է:
«Ի՞նչ անեմ. ինչպէս անցկացնեմ իմ ժամանակը. ինչպէս ես ինձ թմարց-
նեմ, ինձ խաբեմ, որպէս զի չզգամ ապրելու: Եւ չուեսես չեմ, ես չուա-
հատւած չեմ. ես կեանքը գնահատում եմ, ես չուեր ունեմ... Ա՛խ, պ-
Պատրիկեան, ես կեանք եմ ուզում, կեանք»: Եւ օր. Նուարդը մէն մէ-
նակ, առանց պաշտպան ձեռքի, առանց քաջալերող ընկերի, անփորձ
լուզորդի նման մտնում է ծովը, միայն թէ կարողանալ ձեռք բերել պան-
ծալի կեանքը. «Եւ փորձեցի ձրի դասեր տալ մի տարրական դպրոցում,
բաց աղ պարապմունքները չգոհացրին ինձ և վիրաւորեցին մօրս և ես շու-
տով հրաժարեցի»:

«Եւ առաջարկեցի ծնողներիս, որ կարողութիւն տան ինձ բանալու
մի փոքրիկ մանկական դրաղարան, որից ձրի օգուէին ուսումնարանի
աշակերտները: Ծնողներս բացասեցին»:

«Եւ մտադրութիւն ունէի մի փոքրիկ ընկերութիւն կազմելու, որի
անդամները կանոնաւոր կերպով շրջէին մեր աղքատ ընտանիքները և ըստ
կարողութեան օգնէին նոցա»: Եւ ալին, և ալն և ալն:

Օր. Նուարդի բոլոր բարձր նպատակները, դէպի հասարակական լաւ
գործունէութիւնը ուղղած անընդհատ ջանքերը ջախջախւում էին ծնողների
հետեւեալ խօսքերով. «էլի տուտուցութիւնդ բռնեց». իսկ ծանօթերը ու-
սերն էին թափ տալիս, հանաքի գցում, կամ մինչև անգամ ծաղրում էին:
Չգտնելով լաչն հասարակական գործունէութիւնը, որի ծարաւը օր. Նու-
արդը զգում է հոգու բոլոր թեւերով, մեր հերոսուհին ճարահատեալ զբաղ-

ում է թարգմանութեամբ, «նուրբ կերպաների և գեղեցիկ կա՛կարասիքի մէջ թուլատրելի ալդ գործունէութեամբ»։ Եթէ օր. Նուարդի դիրքը, շրջանը վնասում է նորա ամենաջեղում իղձերի, ցանկութիւնների իրազօր-ծելուն, ինչո՞ւ նա ձեռք չէ վերցնում իր դիրքից, չի հեռանում ամեն սուրբ բան մեռցնող իր շրջանից։ Գորան օր. Նուարդը պատասխանում է. «Գիշրաղլարար, ես վճռել չեմ կարող. ինձ պէտք է հրամայել, որ ես ձեռք վերցնեմ. ես կապւած եմ ամբողջ իմ անցեալով իմ ծնողներին հետ ալն կազմով, որ դուք տեսաք։ Ես վճռելու համար պիտի շատ կռւեմ հետս, շատ մտատանջեմ և դադար չունենամ»։ Եւ ալդպէս օր. Նուարդը, լինելով դժգոհ իր շրջապատող մթնոլորդից, միևնույն ժամանակ խիստ կապւած լինելով իր կրթութեամբ սովոր կեանքի նիստ ու կացին, թույլ է զգում իրան փչրոտել կաշկանդող շղթաները, և ճակատագրական քայլը անելու համար սպասում է մէկին, որը պիտի նորան հրամայէ։ Ո՞վ է ալդ հրամայողը. անշուշտ ոչ փարթամ, ճոխ կեանքի սովոր գեղեցկադէմ մի հարուստ և ոչ էլ ղիպլումաւոր համալսարանական չաղ պաշտօնով, իր թշուառ եսից դուրս ոչինչ չիմացող. բայց ինչո՞ւ գուշակել. լսենք Պատրիկեանին։ «Օրիորդը ցուց տաւ իր ձեռքով նկարած մի երիտասարդի կենդանագիրը։ Այդ միջոցին, երբ ես զննում էի պատկերը, օրիորդը սեղմած շրթունքներով և լուրջ նայում էր իմ երեսի արտապատկանը»։

—Մա ղիտէք ով է, ասաց նա—սա իմ ուսուցիչն է, իմ մասնաւոր ուսուցիչը. նա, որ ինձ վարդապետում էր դպրոցից դուրս։ Դուք նորան չէք ճանաչում. նա մալբար քաղաք չէ գնացել կատարելագործելու, ալ... թողնենք գաղտնիք մնալ առ ալժմ»։ Եւ ալդպէս, զարգացած, խելօք, հասարակական գործունէութեան ողջ էութեամբ նւիրած ծարաւ Նուարդները սպասում են պաշտպան, քաջալերող գործիչների... Միթէ օր. Նուարդը չոր անապատում ապրող օրիորդների համար մի օազիս, մի սիրտիչ ապաստարան չէ...

Բոլոր երիտասարդներին անպայման խորհուրդ կըտամ կարդալ «Օրիորդ Նուարդ» և «Օտարօտի ալցելու» վերնագրով նամակները. օգուտով կարելի է կարդալ նաև «Ուսուցիչ Նարոտեանը»։ Պր. Նամակեանի բոլոր մնացած իննը նամակներից, ինչպէս ասել ենք, որ և է օգուտ չենք սպասում։

Մ ա ն օ թ . Խ մ բ . «Պատրիկեանի նամակները» խորագրով պ. Նամակեանը սկսեց գրել «Մուրճ»-ում։ Այդ շարք նամակներից, սակաւն, տպւեցին մեր ամսագրում ոչ բոլորը, որ մտել են առանձին գրքով հրատարակած հատորում, որ և քննադատութեան է առել լօղածագիր պ. Մեւքումեանցը։ «Պատրիկեանի նամակներից», որ փշառակել են այս լօղածոմ, տպւել են «Մուրճ»-ում միայն հօթը, ալն է՝ Օտարօտի ալցելու, երիտասարդ Հաթամեանը, Կեանքի սիւները, Դերուիչը (Աերգոյեան), Օրիորդ Նուարդ, Արանեանի մօտ և իմ ուղեկիցները։

Թերեւս աւելորդ է ասելը, որ «Մուրճ»-ում տպւել է նոյն նամակների նաև պատկերների մի քանի շարք՝ «Կեանքի գծեր» ընդհանուր խորագրով, որ չպէտք է շփոթել «Պատրիկեանի նամակների» հետ։ Վերջինում հեղինակը աշխատել է դուրս բերել երկտասարդ ինտելիգենտների տիպեր, իսկ «Կեանքի գծերը» վերցրած են գիւղացիական կեանքից։

Գալով պ. Մելքումեանցի լողածին, մենք պէտք է ասենք, որ տեղեւնք տալիս նորան մի շարք ճիշդ նկատողութիւնների պատճառով և իբր համեմատապէս լաւագոյնը աչն լողածններից, որ ցաւով ստացել ենք քան և քան անձերից արդ զրքի մասին։ Բայց մենք ամբողջապէս չենք միանում լողածագրի հետ բոլոր նամակների առանձին-առանձին գնահատութեան նկատմամբ։